

ԼԵԶՈՒՆԳԻԻՏԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՍ ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ՝

Նախ երկու խօսք այն մասին թէ պէտք է ստել աշխարհաբա՞ն թէ աշխարհաբար (ինչպէս և գրաբա՞ն թէ գրաբար), այսինքն այս բառը կազմուած է բա՞ն բառով թէ բար մասնիկով:

Շատ վէճեր են տեղի ունեցած այս մասին, յատկապէս արեւմտահայ գրականութեան մէջ, որոնց թւումը կամ ամփոփումը մեր աշխատութեան ծրագրից ու նպատակից դուրս ենք համարում: Յաղթահարեց այն կարծիքը, թէ երկրորդ ձևն է ուղիղ, որին հետեւում է այժմ եւ գլխաւորէր ամենամեծ մասը: Գլխաւոր ապացոյցը ռամկօրէն բառն էր, որ կազմուած է նոյնպէս օրէն մասնիկով՝ իբր մակեայ: Աւելի լաւ ապացոյց է աշխարհօրէն բառը, որ գործածել է Շնորհալին՝ Ս. Պարոմար վկայաբանութեան յիշատակարանում: Ըրտտասորոց (քնագրի) շաղփաղփ եւ ծամածուռ անյարմար եւ ափսոսեօրէն բանիցն գոյր»:

Ինչպէս որ միջին հայերէնը շարունակութիւնն է գրաբարի, նոյնպէս և աշխարհաբարը շարունակութիւնն է միջին հայերէնի: Սակայն մենք տեսանք որ միջին հայերէնը մի ընդհանուր բառ է միայն եւ կան իրար ժամանակակից զանազան միջին հայերէններ, որոնցից մէկը՝ Կիլիկեան հայերէնը, պետականութեան շնորհիւ բարձրացաւ գրականութեան: Հետեւաբար և ունինք բաղմամբիւ «աշխարհաբարներ»: Այդ բառով հասկանում ենք այստեղ այն խօսակցական հայերէնները, Հայաստանի և գաղութներին թիւնն են կազմում արդի բարբառները:

Բայց ինչպէս որ գրաբարի եւ միջին հայերէնի սահմանը որոշելու համար կարելի

էէ դնել մի որեւէ վճռական կէտ, նոյնը նաեւ միջին հայերէնի եւ այդ աշխարհաբարների համար: Այնպէս որ երբ կարգում ենք աշխարհաբարի հնագոյն շրջանի գրութեանը, կարծես զգում ենք դեռ միջին հայերէնի շունչը:

Ահա այդպիսի մի նմոյշ 1591 թուից, Յիշատակարան Բարսեղ Վարագեցու (տպ. Ռիւանդ հտ. Ժ. էջ 34).

Աստուած ողորմի ասացէք խուս Սարգսին, որ բաղում աշխատանք ունի սուրբ եկեղեցիաց վերայ, որ եբեր զեկեւ զեցւոյ դրանդին եւ եղևս պատճառ որ դռներն ամէն քարէ շինեցին. զերկու եկեւ զեցւոյ սալարս. զերկու ժամտան զերկու խորանն, զսան քարերն, զզաթարի քարերն, որ յառաջ չկայր՝ նոր արարին. Զափար փաշէն թափէզ կու նստէր. քէհից դաստուր առանք շինեցինք. քէհէն ի վան կու նստէր. սուպաշին երէկ թէ կու քակեմ, ժամատուն ի գուրս էր դրեր. նոր խորան էք շիներ. Ոսորով աղէն Իսքանտար փաշի զուլն Զափար փաշին խզմաթ կանէր. մէջն անկաւ եթող. ու զմարդիկ յախսն եհան. թէ չի քակուեր նա շատ տուգանք կառուէր՝ Փառք ներողութեան Աստուծոյ. յամենայն ժամ. ամէնս:

Երկու յատկութիւն ենք տեսնում աշխարհաբարի առաջին նմոյշների մէջ 1. գրաբարի առատ խառնուրդ, 2. տեղական բարբառների կնիքը. այնպէս որ կարելի է ստել, թէ իւրաքանչիւր գաւառ ունի իր տեղական առանձին աշխարհաբար, որ զրոգի գիտութեան համեմատ մօտենում կամ հեռանում է գրաբարից:

Տալիս ենք այստեղ հինգ նմոյշ աշխարհաբարի ամենահին գրութեանցներից, բոլորն էլ ԺԷ. Գարից:

1. Արձանագրութիւն 1609 թուից, որ աւանդում է Զաքարիա Սարկաւազը, հտ. Դ. էջ 22 (Յովհաննէս վանք). կրում է Երեւանի բարբառի կնիքը:

Իլիւանու Արուստի այգին տուինք յիշատակ սուրբ Կարապետի. ինչ մարդ էս բանին միջումն ալլեւալ խօսք յետ և յառաջ բան ասայ ու կտրայ, սուրբ Կարապետի իւր յիշատակն կտրայ:

2. Մի հատուած Առաքել Դավրիժեցու Պատմութիւնից (տպ. Վաղարշապատ 1884, էջ 457). գրութեան է 1662 թուին եւ

(*) Վերցուած մեծամուկ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (ԻՋ. Գյուլիս):

կրում է Կիրիկեան միջին հայերէնի կնիքը։
Եւ է քար մի, որ օձի քար ասեն, եւ
թուրքերէն խորելիազ աղչասի ասեն, բոլոր
և սպիտակ լինի, ի սաստաֆի ջընսեն է,
մէկ երեսն ղուպայ (գմբէթաձեւ) է և մէկ
էլ երեսն գուր։ Եւ ի գուր երեսն ունի
մարդուրս բարակ սեւ թել է և յայպէս։
խասիաթն նորա այն է, որ թէ ուռպ, որ
է պէզմաղով ի վերայ օձիկ ցաւոյն կարմիր
տեղին դնես, նա կպի ի վերայ կարմիր
տեղին և ութն օր չի փրթիր ի վերայէն
մինչև որ ողջանայ Աստուծով։»

«Ծաւր՝ որ է գոյնն կանաչ փերփէրի
գոյն, եւ կայ ի քիւնքն կարմիր կետեր
շատ, եւ մօտ ֆռանկն մախպուլ է. եւ
պինդ է ի բանելն, եւ շատ է. ամեն տեղ
կայ։»

3. Պարզաբանութիւն հոգեմտաբան Սաղ-
մոսացի Գալսթի. ի նուազօր Յոսեփիսէ
վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ տը-
պագրեցեալ արդեամբք եւ գոյիւք Ագու-
լեցի խօճայ Գուշազարի որդի խօճայ Նա-
հապետին, Վենետիկ 1687: Յառաջբանի
մէջ ասուում է թէ Ագուլեցի խօճայ Գուշ-
ազարի որդի խօճայ նահապետը տեսնելով
որ Իսապղիքը ունին Սաղմոս այնպիսի
լեզուով որ ամէնքը հասկանում են, ինքն
էլ ցանկացել է ունենալ հայ ժողովրդական
լեզուով մի Սաղմոս։ Իր փափաքը յայտնել
է Պոլիս, բայց չի կարողացել լրացնել։
Վենետիկ գնալով յայտնել է Յովհաննէս
վարդապետին եւ անա վարդապետը լրա-
ցնում է նրա փափաքը։ 840 երեսանոց
ընդարձակ մի գիրք է, որի լեզուն խառ-
նուրդ է գրաբարի, արեւմտեան աշխարհ-
հարարի եւ արեւելեան աշխարհաբարի.
կան նոյնիսկ ինձանից, քեզանից ձեւերը։
Հեղինակը Պոլսեցի լինելով՝ ընդհանուր ոճը
արեւմտեան հայերէնն է։

«Իմ հոգւոյս խորունկ և ծածուկ խոցերն
և ցաւերն սրտիս և լերդիս խորունկ տե-
ղերէն գոռալով դէպ քեզ աղաղակեցին
տէր աստուած. քոյ սահմանք ձայներովն,
իբր քոյ երկնային զոներին ձայնին նման
ձայն հանելով և որոտալով առ քեզ գո-
լեցին, եւ ճար խնդրեցին բժշկութեան։
Ձեռք ամէն քո զբօսանքդ և քո ալիքդ իմ
վերայես անձ կացան, իբր քո ամէն բար-
կութիւնդ և ցաւառնքդ, քո գանձան
փորձութիւնքդ և քո պատուհաններդ խառ-

նակեալ ծովու մրրկաց տաղաներին նման
իմ վերայես անց կացան, և զիս ծածկեցին
և խեղճ արարին» (էջ 218)։

4. Գանձ չափով՝ կշռոյ՝ թըւոյ՝ եւ
գրամից բոլոր աշխարհի. ժողովեալ Ղու-
կասու Վանանդեցւոյ, ծախիւք և ի խնդրոյ
հայցման Ջուղայեցի Խաչատուրի որդի պա-
րոն Պետրոսին, 1699 յԱմստերդամ, կրում
է Ջուղայի բարբառի կնիքը։

«Մօսկովի ալիշվերէի փողն արծաթ է,
որ ասօ ասի։ 1 ունիւուող ոսկին 110, 120
կօպէք այ։ 1 թօքմայ մարչին՝ 55,60 կօ-
պէք այ, դահաւել կահ պակաս։ Ինչ դարայ
հաստ իքմին կայ ողջ փութով կու խօսին.
և ինչ բարակ իքմին կայ՝ ֆունթով խօսին»
(էջ 36)։

5. Մի հատուած Զաքարիա սարկա-
ւազի Պատմութիւնից, հտ. Բ. էջ 9, գրուած
1699 թուին. Կարեցի գիւղացոց բերանը
գրուած մի խօսք է. ընդհանուր ֆօնը զը-
րաբար է, բայց կրում է Երեւանի բար-
բառի կնիքը։

«Ծահի ոտոց հողի յայտնի լիցի ի կարբւոյ
ողորմելու շինականացս։ Ձի մեք լուաք թէ
Սամանլու է գալիս աշխարհս մեր, մեք
զլլաւալի եմք սովոր։ գեղով ելանք փա-
խանք ելանք թէ Սամանցւոցն ծառայ չեմք
կարող լինել։ Եւ եկաք դէպ ի օսահանս
քոյոյ տէրութեանդ։»

ԺԼ. գրուած շարունակուած է դեռ նոյն
ոճը. գրականութեան լեզուն զուտ գրաբար
է մասնաւոր լատինաբան գրաբարը։ Հազիւ
երբեմն երեւում են աշխարհաբար գրքեր։
Անա գրանցից վեց նոյն՝ ժամանակա-
գրական կարգով։

1. Մի հատուած Ծորդէրի Արամեան
լեզուի գանձից, որ հայերէնի քերական-
նութիւնն է լատիներէն լեզուով (տպ. Ա-
մլատերգամ 1711), Այստեղ իբր յաւելուած
կան աշխարհաբարի նմոյշներ բոլորն էլ
բարբառով։ Յաջորդը Երեւանի բարբառով
է (էջ 347)։

«— Այ տղայ կազար գնա մին մեր Ծա-
տուրն կանչէ դայ։

— Աղայ գնացի Ծատուրն նոր տեղ էր
մտեւ. ասաց թէ չորս հազմիմ դամ։

— Բարի իրիկուն Աղային թողութիւն
անես Աղայ շատ վատապիկ էս օր չուտ
գնացի տեղս Ղազարն եկաւ ասաց Աղեն
կանչում այ։

— Գրիտես ախպէր Մատուր, ինչու քեզ էսէնց բիվարտ կանչեցի:

— Հրամայեալ զուլուզիտ հազիր եմ:
— Իգուց ախպէր Մատուր մեր տանն հացկերուտ այ՛ շատ մարդ եմ կանչել...»

2. Գիրք որ կոչի ճիմն ստուգութեան հաւաքեցեալ յովնմնէ բանասիրէ, Պոլիս, 1763, գրաբարը միացած Պոլսի ռամկականի հետ՝ թուրքերէն բառերով խառն:

«Ձէրէ՛ ամենայն ազգքն խաշապաշտից՝ են նոյն առաքելականի սրբոյ եկեղեցւոյն անգամք, և որդիք, և հետեւողքն առաքելականի եկեղեցւոյն առձայնին. զէրէ Ազամ բանական էր և մենք այ Ազամայ որդիք եմք, անոր համար բանական կըսուիմք. վասնորոյ՝ հրմիւլ, թէ որ Գրիստոսի առաքելոցն հետեւիմք նէ առաքելական կլլամք, և առաքելական կու կոչուիմք: Եւ եթէ չի հետեւիմք նէ՛ չեմք ըլլար» (էջ 29-30):

Ձէն հոգեւոր, Պոլիս, 1787, գրեթէ նոյն լեզուով ինչոր նախորդը:

«Թէ որ ասենք, յաւուրս մէսիայիս պիտի բար խաղաղութիւն լինի, ինչպէս ասեր է Դաւիթ... Իմտի ասոնք ինչպէս զըթ չեն: Ասեմ քի ով հրեայք, զայն Դաւթի սաղմոսն դուք ի վերայ Սաղմոսնի կու մեկնէք. եւ յորժամ կամիք հաշիւ ի վերայ աւետարանչացն կու դարձնէք ըզտիւմէն ի վերայ Գրիստոսի: Լաքին մանի չէ. կերչէքտէն այն սաղմոսն ի վերայ Գրիստոսի եախշմիւլ կուլինի. զէրէ կասէ Դաւիթ...» (էջ 94):

4. Խաշատուր վարդապետ Սիւրմելեանի Համառոտ թուարանութիւն աշխարհաբար, Վենետիկ, 1788, զուտ աշխարհաբար է առանց գրաբարի, միայն գարձեալ Պոլսի ռամիկ ձեւերով:

«Իրեք կերպ կլլայ կտորը: Առջի կերպը ան է՝ որ համրօղը ու յայտնօղը հաւատար կըլլան, յայինքն թէ վերինը, և թէ վարինը նոյն բախամ կըլլան. զորօրինակ ասոնք, 2/2. 3/3... Երկրորդ կերպը աս է որ վե-

րինը մենծ կըլլայ քան զվարինը: զորօրինակ ասոնք 3/2, 5/3... Երրորդ կերպը աս է, որ վերինը պզտիկ կըլլայ քան զվարինը. զորօրինակ ասոնք, 1/2, 3/4...» (էջ 60):

5. Գիրք որ կոչի բանալի գիտութեան (բառարան հայ-ռուս, ռուս-հայ և խօսակցութիւն հայ-ռուս). հեղինակն է կղէօպատ-բայ Սարաֆեան, Սանկպետրբուրգ 1788. մաքուր արեւելական աշխարհաբար է՝ խառն գրաբար ձեւերով:

«— Ուր ես գնում հրամանքդ այտպէս կանուխ:

— Ես գնում եմ դպրատունն:

— Յորում ժամու պարտիս հրամանքդ տեղն լինի:

— Երբ որ զանգակն հարէ:

— Յորում ժամու հարէ զանգակն:

— Եօթնեորդ ժամուն:

— Աշակերտքն որք գալիս են յետ հաւելոյ զանգակին լինումէ նոցա պատիժ:

— Ուսուցիչն նոցա նստուցանում է ի վերայ ծնկանց:

— Շատ են նստում նոքա այնպէս:

— Միչի այն ժամանակն երբ ուսուցիչն նոցա հրամայէ կանգնիլ» (էջ 245):

6. Տեսութիւն համառոտ ճիմ եւ նոր աշխարհագրութեան, Հ. Ղ. Ինճիհեան, Վենետիկ, 1791, մաքուր արեւմտահայ աշխարհաբար:

«Վառչապա կամ Վարչօ մայրաքաղաքը բոլոր թագաւորութեան լեհու ուր կը նստի թագաւորը. քաղաքը պարսպապատ է, Վիսլա գետին վրայ շինած. պզտիկ՝ բայց իրեն եօթը արուարձաններով կամ վարչեւրով մեծ է. աս տարիներս արուարձաններուն չորս գիացեն ցըցերով պատնէշ կամ մէթէրիզ քաշեցին. քովը ունի մէկ մեծ գաշտ մը ուրտեղ կըլլայ իրենց ժողովը թագաւոր ընտրելու վրանի կամ չատըրի տակ» (էջ 71):

ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շաբաղաւթի)